ՀՀ Վայոց
Ձորի մարզ

Բարձրունու
միջն. դպրոց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուս. տարի

1-ին, 2-րդ կիսամյակ

Դասարան՝ 12-րդ

Ուսուցչուհի՝ Թագուհի Մուրադի Ալեքսանյան

Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն Ն.Ալեքսյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԵՐ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) XII դասարանում սովորում են 11 աշակերտ՝ 2 տղա: 1-ին կիսամյակից դասարան եկավ 1 տղա/Արցախից բռնի տեղահանված: Այժմ XIIդ. սովորում են 2 աշակերտ՝ 2 տղա:

2.ՈՒսումնա-դաստիրակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1.ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ(կարգապահություն,մաքրություն

,սանիտարահիգիենիկ վիճակի պահպանում և այլն):

2.Ստեղծել դասարանական անկյուն(դասացուցակ,հերթապահության ցուցակ):

3.Կապի մեջ պահել ուսուցիչ-ծնող-դպրոց հարաբերությունը:

4.Պատրաստվել վերջին դաս/վերջին զանգին:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ(եկեղեցական տոներ,այցելություն եկեղեցիներ):Կազմակերպել քննարկումներ և ցուցադրություններ:

3.2 Գեղագիտական դաստիրակություն Կազմակերպել ֆիլմերի դիտում և քննարկում:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիրակություն Աշակերտներին մասնակից դարձնել ռազմա-հայրենասիրական բնույթ կրող միջոցառումներին: Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով:

3.4 Ֆիզիկական դաստիրակություն Անցկացնել շարժախաղեր,սեղանի խաղեր,մրցույթներ:

Զրույց „Առողջ մարմնում առողջ հոգի„ թեմայով:

4.Դպրոց-ընտանիք կապը Անցկացնել ծնողական ժողովներ:Կապ պահպանել ծնող- դպրոց-ուսուցիչ:ՈՒսումնասիրել աշակերտների սոցիալական պայմանները:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻՐԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական շաբաթներ	ՈՒսումնա-դաստիրակչական աշխատաքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
	Գիտելիքի օր	1-ին շաբաթ	Դասղեկ,աշակերտ
	Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում	2-րդ շաբաթ	Դասղեկ,աշակերտ
	Հայաստան, իմ հայրենիք	3	Դասղեկ,աշակերտ
	Անկախության 33-ամյակին նվիրված ժամ	4	Դասղեկ,աշակերտ
	Նրանց մասին ով նվիրված է մեզ	5	Դասղեկ,աշակերտ
	ՈՒսուցչի օրվա	6	Դասղեկ,աշակերտ
	Գրից մինչև գիրք(Թարգմանչած տոն)	7	Դասղեկ,աշակերտ
	Ինչպե՞ս հասկանալ դիմացինին	8	Դասղեկ,աշակերտ
	Մարդ,որին կուզեի նմանվել	9	Դասղեկ,աշակերտ
	Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ	10	Դասղեկ,աշակերտ
	Ինչպե՞ս եմ պատկերացնում ինձ դպրոցն ավարտելուց 10 տարի անց	11	Դասղեկ,աշակերտ
	Դժվարություններ, որոնց բախվում եմ	12	Դասղեկ,աշակերտ
	Իմ երազանքներն ու նպատակները	13	Դասղեկ,աշակերտ
	Հիշատակի օր	14	Դասղեկ,աշակերտ
	Տարեվերջյան ամփոփում	15	Դասղեկ,աշակերտ
	Ահաբեկչությունը որպես մարդկության չարիք	16	Դասղեկ,աշակերտ
	Մարդիկ,որոնց քաջությունը ցնցել է ողջ աշխարհը	17	Դասղեկ,աշակերտ
	ՈՒԺի,փառքի և անմահության մասին	18	Դասղեկ,աշակերտ
	Մարդիկ,որոնց շնորհիվ մենք ապրում ենք... Հայոց բանակի 33-ամյակին նվիրված ժամ	19	Դասղեկ,աշակերտ
	Բարեկամություն,որ չի դիմացել փորձություններին	20	Դասղեկ,աշակերտ
	Իմ իրավունքներն ու պարտականությունները	21	Դասղեկ,աշակերտ
	Տյառնընդառաջ	22	Դասղեկ,աշակերտ
	Գրքի տոն	23	Դասղեկ,աշակերտ
	Գարնանամուտ	24	Դասղեկ,աշակերտ
	Գարնանային տոներին ընդառաջ	25	Դասղեկ,աշակերտ
	ՈՒսուցիչ,որին ես շնորհակալ եմ այն բանի համար,որ նա...	26	Դասղեկ,աշակերտ
	Լսելու կարողություն	27	Դասղեկ,աշակերտ
	Հումորի օրվա կապակցությամբ փոքրիկ տեսադաս	28	Դասղեկ,աշակերտ
	Դժվարություններ,որոնց բախվում եմ	29	Դասղեկ,աշակերտ
	Հիշատակի ժամ (նվիրված եղեռնի զոհերի հիշատակին)	30	Դասղեկ,աշակերտ
	Ինչպե՞ս եմ ինձ պատկերացնում դպրոցն ավարտելուց հետո	31	Դասղեկ,աշակերտ
	Ու՞ր եմ գնալու սովորելու	32	Դասղեկ,աշակերտ
	Մայիսյան հերոսամարտեր,հաղթանակին եռատոն	33	Դասղեկ,աշակերտ
	Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները	34	Դասղեկ,աշակերտ
	Վերջին դաս	35	Դասղեկ,աշակերտ

ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐ

Գիտելիքի և դպրության օր, պետական տոն, որը նշվում է սեպտեմբերի 1-ին՝ նոր ուսումնական տարվա առաջին օրը: Նշվում է 1984 թվականից:

Սեպտեմբերի 1-ին ուսումնական տարին սկսելու ավանդույթը հին ակունքներ ունի: 4-րդ դարում՝ 325 թվականի մայիսի 20-ին, Բյութանիայի Նիկիա քաղաքում բյուզանդական կայսր Կոստանդիանոս Ա Մեծի հրամանով գումարվել է Նիկիայի Ա տիեզերական ժողովը, որտեղ որոշում կայացվեց նոր տարին սկսել սեպտեմբերի մեկից:

Ըստ ավանդության Արիստակեսը Հայաստան է բերում Նիկիական ժողովի որոշումները և ներկայացնում Գրիգոր Լուսավորչին: Վերջինս դրանք ներմուծում է Հայ եկեղեցու դավանաբանության և ծիսակարգի մեջ: Եվ քանի որ այդ ժամանակաշրջանում բոլոր դպրոցները գործում էին եկեղեցիներին կից, նոր ուսումնական տարին ևս սկսել են նշել սեպտեմբերի մեկին: Իսկ Ռուսաստանում այն սկսել են նշել 15-րդ դարի վերջին՝ 1492 թվականին, Հովհաննես III-ի հրամանով: Բայց շատ պատմիչներ գտնում են, որ եկեղեցին Հովհաննեսի ցուցումով մինչ այդ տարվա սկիզբը արդեն սկսել էր տոնել սեպտեմբերին:

Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում

«Անկեղծ ընկերություն» այս արտահայտությանը շատ հաճախ կարող ենք հանդիպել՝ գրքերում, ֆիլմերում, առօրյայում ինչու չէ նաև մուլտերում:Մեզ շրջապատող աշխարհը և մարդիկ իրենց յուրովի ընկալումն ունեն այս հարցի շուրջ:Իսկ ո՞րն է անկեղծ ընկերությունը, կա արդյոք մի կանոն, որով կարելի է առաջնորդվել, հաճախ են մարդիկ իրենք իրենց տալիս այս հարցը:Մարդը վերստին օժտված է հավատարիմ և անկեղծ ընկեր լինելու ունակությամբ:Ցքավոք ոչ բոլորն են կարողանում այդ ունակությունը ճիշ օգտագործել և հաճախ այն ընկերությունը, որը թվում է անկեղծ ու ազնիվ լինում է ճիշտ հակառակը:Այդ անկեղծության շղարշի տակ հաճախ թաքնված է լինում խարդախություն, անազնվություն, որը մարդկանց վանում է այն մտքից, որ գոյություն ունի անկեղծ ընկերություն:Մարդիկ խուսափում են ընկեր ձեռք բերելուց:Բայց չէ որ ոչ բոլորն են այդ ընդունակությունը սխալ օգտագործում, իհարկե կան մարդիկ որոնք ճիշտ են օգտագործում ու կարողանում են ստեղծել անկեղծ ընկերություն ու պահպանել այն:Դե իհարկե գոյություն ունի անկեղծ ընկերություն ուղղակի պետք է ճիշտ ընտրել ընկերներին:Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ չի կարելի մի քանիսի արարքով դատել բոլորին:Եթե բոլորին դատենք նույն կերպ, ապա կարող ենք կորցնել մեր լավ ընկերներին և նրանց որոնց գուցե դեռ չենք էլ գտել:

<u>Հայաստան, իմ հայրենիք</u>

Մեր հայրենիքը շատ հին է: Այն բազում լավ ու վատ օրեր է տեսել: Տեսել է պատերազմներ, թալան ու ավեր, բայց մեր պապերն այնքան քաջ ու աշխատասեր են եղել, որ կարողացել են այն պաշտպանել ու հասցնել մեզ:

Հայոց երկիրն իր անվանումը ստացել է մեր նախահայր Հայկի անունից: Երբ քաջ հսկա Հայկը իր աղեղով և երեքթևյան նետով սպանեց բռնակալ Բելին, դրանից հետո երկիրը նրա անունով կոչվեց Հայք, այսինքն՝ Հայաստան: Իսկ մենք բոլորս Հայկ Նահապետի սե-րունդներն ենք, և այս երկիրը բոլորիս հարազատ տունն է: Մենք այն ժառանգություն ենք

ստացել մեր նախնիներից, որպեսզի մենք էլ մեր հերթին շենացնենք և փոխանցենք մեր որդիներին:

Այսօր մենք ունենք մի փոքր, բայց անկախ պետություն, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Այն կրճատ անվանում են նաև Հայաստան: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է, որն աշխարհի հնագույն քաղաքներից է: Այն հիմնադրել է Արգիշտի Առաջինը Քրիստոսի ծննդից առաջ 782 թվականին: Երևանն անվանում են վարդագույն քաղաք, քանի որ շենքերն այստեղ հիմնականում կառուցված են վարդագույն տուֆից: Մեր մայրաքաղաքն այսօր էլ շատ գեղեցիկ է, կառուցվել են բազմաթիվ նոր շենքեր, փողոցներ, տեղադրվել են հուշարձաններ:

Հայաստանի խոշոր քաղաքներն են Գյումրին և Վանաձորը: Մեր երկրի տարածքը այժմ կազմում է մոտ 30 հազար քառակուսի կմ, իսկ բնակչությունը ավելի քան 3 միլիոն է:

Հայաստանի Հանրապետության հարևաններն են՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Իրանը:

Անկախության 33-ամյակին նվիրված ժամ

Հայաստանի անկախության տոն, Հայաստանի պետական և ազգային տոներից մեկը: Անկախության տոնը Հայաստանում նշվում է ամեն տարի սեպտեմբերի 21-ին:

Պատմություն[խմբագրել | խմբագրել կոդը]

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի գերագույն խորհուրդը ընդունել է Հայաստանի անկախության հռչակագիրը, որտեղ նշված էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում է և ձևավորվում է նոր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը[1]: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը անկախության հանրաքվեի ժամանակ կողմ է քվեարկել ԽՍՀՄ կազմից դուրս գալու օգտին: 1991 թվականի նոյեմբերին Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվել է ՀՀ առաջին նախագահ: Հայաստանը լիակատար անկախություն է ձեռք բերել նույն տարվա դեկտեմբերի 26-ին՝ ԽՍՀՄ կազմալուծման արդյունքում[

Նրանց մասին ով նվիրված է մեզ

Ծնող, հարազատ, բարեկամ, ընկեր՝ ինչպես և ինչքանով են մեզ նվիրված
Եվ ում ենք մենք նվիրված,կարելի է արդյոք ինքնամոռաց նվիրվել

ՈՒսուցչի օր

- Ավստրալիա՝ նշվում է հոկտեմբերի վերջին ուրբաթ օրը[1]:
- Ալբանիա՝ նշվում է մարտի 8-ին:
- Արգենտինա՝ Դոմինգո Ֆաուստինո Սերմիենտոյի հիշատակի պատվին նշվում է սեպտեմբերի 11-ին:
- Բրազիլիա՝ նշվում է հոկտեմբերի 15-ին[2]:
- Վիետնամ՝ նշվում է նոյեմբերի 20-ին:
- Հնդկաստան՝ տոնում են սեպտեմբերի 5-ին (Սարվեպալի Ռադհակրիշնանի ծննդյան օրը):
- Իրան՝ տոնում են մայիսի 2-ին:
- Չինաստան՝ նշվում է սեպտեմբերի 10-ին: Հաստատվել է 1985 թվականի հունվարին 6-րդ գումարման ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի մշտական կոմիտեի 9-րդ նստաշրջանի որոշմամբ[3]: Սովորաբար աշակերտներն իրենց ուսուցիչներին նվերներ են անում և ծաղիկներ ու բացիկներ նվիրում՝ ի նշան հարգանքի:
- Հարավային Կորեա՝ նշվում է մայիսի 15-ին:
- Թայվան՝ տոնում են սեպտեմբերի 28-ին՝ Կոնֆուցիոսի ծննդյան օրը:
- Ուզբեկստան՝ նշվում է հոկտեմբերի 1-ին, հանգստի օր:
- ԽՍՀՄ, Բելառուս, Լատվիա, Ղազախստան, Ուկրաինա՝ Ուսուցչի օրը հիմնադրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից 1965 թվականի սեպտեմբերի 29-ի հրամանագրով (և հռչակվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից 1980 թվականի հոկտեմբերի 1-ի «Տոնական և հիշատակի օրերի մասին» հրամանագրով): Բելառուսում, Լատվիայում, Ղազախստանում և Ուկրաինայում նշվում է հոկտեմբերի առաջին կիրակի օրը:
- Հայաստան, Ադրբեջան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան, Ռուսաստան[4], Էստոնիա, Լիտվա՝ նշվում է հոկտեմբերի 5-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած ուսուցիչների համաշխարհային օրվա հետ:
- Լեհաստան՝ նշվում է հոկտեմբերի 14-ին:
- Թուրքիա՝ տոնում են նոյեմբերի 24-ին:

Հայաստանում Ուսուցչի օրը ՀՀ կառավարության 2001 թվականին հոկտեմբերի 1-ի N 919 որոշմամբ նշվում էր հոկտեմբերի առաջին կիրակի օրը, որպես «Ուսուցչի տոն»: Հետագայում 2010 թվականի մայիսի 21-ի օրենքի Պ-911-21.05.2010-ԳԿ-010/0 լրացմամբ այն տոնվում է հոկտեմբերի 5-ին:

Սուրբ Թարգմանչաց տոն

(ամբողջական անվանումը՝ Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց), հայ ժողովրդի ազգային-եկեղեցական տոներից է, նշվում է Սուրբ Խաչի տոնի չորրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը: Խորհրդանշում է հայոց գրերի գյուտը, Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը, թարգմանչաց շարժումն ու հայ դպրության սկիզբը: Հայ առաքելական եկեղեցին «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց» անվան ներքո տոնում է վեց թարգմանիչների՝ Մեսրոպ Մաշտոցի, նրա ավագ ու կրտսեր աշակերտների՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու հիշատակը:

Ինչպե՞ս հասկանալ դիմացինին

1. Քեզ կյանքիդ ընթացքում ամեն հանդիպած մարդուն չէ, որ դու դուր կգաս, սակայն դա չի նշանակում, որ դու բոլորին դուր չես գա:
2. Ընտանիքը միշտ չէ, որ հարազատ արյուն է նշանակում: Կան մարդիկ, որոնց դու հանդիպում ես ու պարզապես զգում, որ քո տունը հենց նրանք են, որ կան: Այդ մարդկանց սրտիդ մոտ պահիր:
3. Երբեմն մարդը, ում դու ուզում ես, նույն բանը քո նկատմամբ չի զգում: Եվ հաճախ դա քեզ հետ ոչ մի կերպ կապված չէ: Ոչ ոքի թույլ մի տուր՝ քեզ ասի քո արժեքը:
4. Հարաբերություններ գտնելու ամենահեշտ եղանակը միայնակ լինել սովորելն է:
5. Երբեք ոչ ոքի քո կյանքում մի ընդունիր այնպես, ասես հենց այդպես էլ պետք է լիներ, որովհետև դու երբեք չգիտես, թե երբ այդ մարդը կհեռանա:
6. Լսիր քո մտերիմներին այն ժամանակ, երբ նրանք ասում են բաներ, որոնք դու չես ուզում լսել: Սովորաբար նրանք դա լավագույն մղումներով են ասում:
7. Միշտ էլ կգտնվի քեզնից լավը: Այնպես որ, ժամանակդ մի վատնիր քեզ ուրիշների հետ համեմատելու վրա:
8. Մի մոռացիր նայել նրանց, ովքեր քեզնից քիչ ունեն, ու շնորհակալ եղիր:
9. Հեքիաթային կյանք չի լինում, ինչպես և չեն լինում կատարյալ մարդիկ: Ձգտիր ապրել հագեցած, արկածներով լի, ոչ ձանձրալի կյանքով:
10. Դու երբեք երջանիկ չես լինի, եթե կառչես այն բաներից, որոնք քեզ վշտացնում են:
11. Եթե դու վատ օր ես ունեցել, պարզապես հիշիր, որ կարող ես լաց լինել: Եթե քեզ պետք է արտասվել՝ դեմքդ բարձին սեղմած արա դա: Սակայն հետո մի մոռացիր վեր կենալ, հավաքվել ու առաջ գնալ:
12. Դու միշտ պատասխանատվություն ես կրում քո վարքագծի համար, ինչ էլ որ զգաս տվյալ պահին: Եվ դու քեզ միշտ պետք է լավագույնս դրսևորես: Մարդկանց մեծ մասը չարժեն քո վատնած էներգիային ու ժամանակին:
13. Հիշիր, որ պետք է ինքդ քեզ պաշտպանես, որովհետև ոչ ոք այլևս դա չի անի: Երբ ինչ-որ մեկը վիրավորում է քեզ, ստիպիր լռել այդ մարդուն: Հիշիր, որ դու չպետք է գոռաս կամ կռվես քո իրավացիությունն ապացուցելու համար:
14. Որքան շատ ես դու ընդունում քո սխալներն ու թերությունները, այնքան շատ են մարդիկ հարգում քեզ:
15. Մենք շարունակ խճճվում ենք մեր սեփական մտքերի մեջ: Այնպես որ, գոնե երբեմն հեռախոսդ, ականջակալներդ ու բոլոր գաղջեթներդ տանը թող: Տես, թե որքան բան ես դու կյանքում բաց թողնում:
16. Չկա որևէ մարդ, ով ամեն օր երջանիկ կարթնանա: Կլինեն օրեր, երբ դու պարզապես գոյություն կունենաս: Դու պետք է սովորես գնահատել ժամանակը, երբ դու հանգիստ ու ամեն ինչից գոհ ես, այլ ոչ թե՝ ուշադրությունդ կենտրոնացնես միայն վատ ժամանակահատվածների վրա:
17. Ինքդ քեզ հետ երջանիկ լինել սովորիր, քանի որ դա քո ունեցած ամենաերկարատև հարաբերություններն են:
18. Այն, ինչ ուրիշ մեկը մտածում է քո մասին, քո գործը չէ:
19. Որքան շատ ես դու փորձում տպավորել ինչ-որ մեկի, այնքան քիչ դու նրան դուր կգաս: Այնպես որ, մի վատնիր ժամանակդ: Եղիր քեզ պես, և ճիշտ մարդիկ կգան քո կյանք ու կգնահատեն քեզ:
20. Փոփոխություններ միշտ էլ հնարավոր են, ցանկացած ժամանակ, ցանկացած պահի

Մարդ,որին կուզեի նմանվել

Մարդ շատ հաճախ չգիտի, պարզապես չի կարողանում որոշել, թե իրոք ում կարող է նմանվել: Մտածում եմ ու զգում եմ, որ ես միայն ինձ եմ նման: Մտածում եմ չգիտեմ, թե որն է սահմանը վեհության և ինչին պետք է ձգտեմ: Յուրաքանչյուր մարդու հոգու խորքում նստած է մի թաքուն պահանջ, ստուգել իր լավն ու վատը, ստուգել ինքն իրեն, իր մտածածն ու արածը, ճիշտն ու սխալը, արդարն ու անարդարը, ստուգել իր տեղը կյանքում՝ այս արևի տակ, և իր նմանների կողքին, ստուգել իր ապրելու իմաստն ու նպատակը:

Չեմ սիրում նմանվել նրանց, ովքեր նայելով մարդկանց աչքերի մեջ ստում են, խաբում և անտարբերություն ցուցաբերում բոլոր պարագաներում:

Մեծ փիլիսոփա Ռոժե Գարոդին ասել է. «ինքնակատարելագործման երեք ուղի կա. առաջինը խորհրդածությունների ճանապարհն է, որն ամենաազնիվն է, երկրորդը՝ նմանարկելը՝ ամենահեշտը, և երրորդը փորձ ձեռք բերելու ճանապարհն է, որն ամենադժվարն է»: Հենց այս դժվար ճանապարհն է, որին ես պետք է հասնեմ, նմանվելով նրանց, որոնք ունեն կամքի ուժ և մեծ համբերություն:

Ինչքան մտածում եմ, թե իրոք ում եմ նմանվում՝ նմանվում եմ և՛ մայրիկիս, և՛ հայրիկիս, որոնց մեջ զարգացած են բնավորության այնպիսի գծեր, որոնք ինձ թև են տալիս, որ հասնեմ իմ նպատակին: Հայրս իսկական մեծատառով տղամարդ է մեր տանը, մայրս՝ մի քնքուշ ծաղիկ, բարության մարմնացում, արվեստը լավ ընկալող և վերարտադրող, մի բան, որ ժառանգել եմ ես: Դա մի խորացած արվեստ է, որին ձգտում եմ հասնել ես: Ինչքան էլ ուզում եմ չնմանվել որևէ մեկին, այնքան ավելի եմ սկսում նմանվել և ձեռք բերել ծնողներիս բնավորության գծերը: Եվ եթե դա այդպես է, ուրեմն դա ամենալավ նմանակումն է որ ես երբևէ կարող եմ անել կատարյալ մարդ դառնալու համար:

Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ

Շրջապատի՛ր քեզ սիրելի մարդկանցով և գեղեցիկ իրերով: Ժպտա՛: Աշխարհը գեղեցիկ է, բայց առավել գեղեցիկ են քո աչքերը, երբ դու ժպտում :
Տունդ լցրու՛ գեղեցկությամբ, իսկ սիրտդ՝ սիրով: Սովորի՛ր մանրուքներում կարևորը տեսնել, ընտրի՛ր գլխավորը...
Հեռացի՛ր ցանկացած վատից՝ լինի դա մարդ, թե՝ իր:
Մի՛ լսիր և ենթարկվիր այլոց կարծիքներին: Կարևոր չէ, թե ինչ են խոսում քո մասին, նրա մասին, ով մյուսներից մի գլուխ բարձր է, միշտ էլ խոսելու են

Ինչպե՞ս եմ պատկերացնում ինձ դպրոցն ավարտելուց 10 տարի անց

Զրույց քննարկում՝ իմ հաջորդ 10 տարիները դպրոցն ավարտելուց հետո...

Դժվարություններ, որոնց բախվում եմ

Ստեղծել կարգախոս դժվարությունների ժամանակ չհանձնվելու,դժվարությունները հաղթահարելու և պատվով հաղթող դուրս գալու:

Իմ երազանքներն ու նպատակները

Ինչ երազանքներ ու նպատակներ ունեմ ես և ինչ եմ անում ես դրանք իրականացնելու համար...

Հիշատակի օր

Դեկտեմբերի 7, երկրաշարժի զոհերի հիշատակման օր...

Տարեվերջյան ամփոփում/1-ին կիսամյակի ավարտ/